

իւր անխոհեմութենէն, իւր կիրքերէն, Ապագայէն մի վախճար ուրեմն, այլ քեզմէն: Ապագան Աստուծոյ կը գայ մեզ. իսկ մարդոյն պատահած թշուառութեանց և տառապանաց աղէտներն նոյն իսկ մարդէն կուգան: Ապրէ՛ իբրեւ Քրիստոնեայ եւ հաւատամ որ ինչ որ պատահի քեզ՝ դարձեալ պիտի երջանիկ լինիս:


Եթէ քեզմէն երկիւղ չ'ունիս, ուրիշ բանէ ամենեւին մի վախճար: Ե՛լ առնական եւ քրիստոնէական վատաւորութեամբ անտանելի և տխուր վիճակէդ: Խորհէ՛ լաւ միջոցներու վերայ, օգուտ քաղէ՛ ամեն պարագանէն, ամիսիկէ՛ բոլոր զօրութիւնդ, եւ որչափ կարելի է ջանամ կացութիւնդ բարւոյն: Եթէ ոյժդ պակի, եթէ ամեն բան չը կարողանաս գործել, վըստահ կ'այ, որ մնացածն Աստուծոյ կը գործէ:

Այո՛, դու կ'օգնես ինձ, ո՞վ երկնաւոր Հայր, դու որ փռչւոյ մէջ սողացող մրջինի պիտոյքն անգամ կը հոգաս: Լի յուսով պիտի ապաւինիմ քեզ, ո՞վ Տէր, և ինչ որ պատահի ինձ՝ Նոր Տարւոյս ընթացքին մէջ, երբէք պիտի չը թողում զքեզ, երբէք պիտի չը խախտեմ իմ յոյսս, և ինչո՞ւ պիտի խախտեմ, ինչո՞ւ պիտի երկնչիմ, քանի որ գիտեմ, որ դու ոչ միայն ներկային այլ և ապագային մէջ ես:

Ես պիտի սկսիմ սոյն Նոր Տարին աւելի խոհեմութեամբ, աւելի իմաստութեամբ և աւելի երկիւղածութեամբ, պիտի սկսիմ նոր կեանքով և նոր գործունէութեամբ: Ինչ զբո՞ւրակութիւն որ անգիտեմ ինձ, ինչ զո՞րակութիւն որ անգիտեմ եղնէ, ես պիտի ջանամ միշտ չոր միտումներուն յաղթել և յառաջել բարւոյ թագաւորութեան մէջ:

Եւ եթէ սոյն Տարւոյ կատարածին

չը հասնիմ, եթէ սոյն Տարին վերջինն լինի ինձ համար, կը յուսամ որ ոչ միայն բարեկամացս արտասուքներն, բայց նա և իմ խիղճս վիպ կը կանգնին քո առջեւ, որ քո գծած ճանապարհին վերայ մեռայ: Եթէ սոյն Տարին իմ մահուան տարին լինի, անշուշտ պիտի լինի նաեւ լաւագոյն աշխարհն մոնեղու տարի: Փայթ չէ ուրեմն, եթէ ես մեռնիմ, բաւական է միայն որ ծիծաղ զապիտ յուսով պիտի դիմեմ դէպ ՚ի յաւիտենականութիւն, ուր կը սպասեն ինձ նոր ուրախութիւններ քո արարչագործութեան անհուն հրաշալեաց մէջ, ուր ոչ ամբ կը նորոգին և ոչ դարբ կը փոփոխին, այլ կը թագաւորէ համակ ՅԱԽՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ:



Կ Ր Թ Ա Ր Ա Ն

ԼԵՆՏԵՐԵՆԵԿԸՆ ԲԸՆԻՅ

Պ Ա Ս Ի .

Տ Ա Ճ Ա Ր Ի Ք Ա Ր Ե Ր Ը (*)

ՄԻՆՁԵՆԻ ցարդ բացատրուած խօսքերն կ'առաջնորդեն մեզ Յիսուսի Քրիստոսի խօսքերու մի կարեւոր բացատրութեանն: Կան շատ մարդիկ, որք կ'արհամարհեն նիւթական մեծութիւնն և տեսանելի շքեղութիւններն: Այս շատ լաւ, բայց ի՞նչ բանի վերայ կը դարձնեն նոքա իրենց նայուածքն: Ի՞նչ առարկայի վերայ է նոցա զարմացումն, եթէ իմացականութեան, կամ, ինչպէս սովոր են անուանել, հոգի վերայ է նոցա զարմացումն, պէտք է

(*) Հարունակութիւն և վերջ:

խմենալ որ Յիսուսի Քրիստոսի կշտամբ
բանքն տեսլիսեսաց եւս կը վերաբերի,
սոցա եւս կ'ասէ նա. « Այս է որ կը
զարմանցնէ զձեզ. այս բանին կը նա-
միր » :

Իմացականութեան կամ միտքն,
իւր բոլոր արժանաւորութեամբ, այն-
չափ բարձր չէ նիւթէն որչափ ցած է
մարդասիրութենէն : Սոյն տարբերու-
թիւնն կամ հեռաւորութեան չափն
յստաջ բերելով՝ մենք նպատակ չու-
նինք բնաւ բամբէլ, ինչ որ Աստուած
միացուցած է : Մենք գիտեմք որ սրբ-
բութիւնն, կամ, ինչպէս ոմանք սովոր
են անուանել, բարոյականութիւնն կա-
րող չէր գոյութիւն ունենալ առանց
իմացականութեան, վասն զի այն էակն՝
որ չը խորհիր բնաւ, բարոյական էակ
չէ : Մենք պէտք է հաւատանք նմա-
նապէս, որ իմացականութիւնն միա-
ցած է գործարաններու հետ. վասն զի
գործունէութեան ժամանակ ինքն եւս
մի գործարան է. այնպէս որ մարդն իւր
լուծութեամբն առնելով՝ է մի էակ միան-
գամայն ֆիլիզիական, իմացական եւ
բարոյական : Եթէ այս լուծութենէն
կամ ամբողջութենէն մին կամ երկուսն
բառնանք, մարդն այլ եւս մարդ չը
լինիր : Սակայն որչափ որ իմացակա-
նութիւնն սերտ միացած է մարմնոյ
հետ, այնու ամենայնիւ կարող ենք
ասել, որ մարմինն ու իմացականու-
թիւնն իրարու համանման չեն, իրար-
մէ առաւելութիւն ունին : Այսպէս
եւս պիտի չը զարմանաք բնաւ, երբ
ասենք որ բարոյական սկզբունքն, թէ
և սերտիւ միացած է իմացական սկզբ-
բունքին հետ, բայց միշտ բարձր է
իմացականէն :

Իմացականութեան յարաբերու-
թիւնն բարոյականութեան նկատմամբ
նոյն է, ինչ որ է մարմնոյ յարաբերու-
թիւնն իմացականութեան նկատմամբ :

Մարմինն է գործի իմացականութեան
և իմացականութիւնն կամ միտքն է
գործի բարոյականութեան : Կարող ենք
ասել նաեւ, որ մարմինն ու իմացակա-
նութիւնն թէ՛ իւրարու անհաւասար,
բայց թէ՛ մին և թէ՛ միւսն երկոքեանն
իմաստին, երկու գործի են բարոյակա-
նութեան : Ուրեմն բարոյականու-
թիւնն է նպատակ և մարմինն ու ի-
մացականութիւնն են միջոցք : Արդա-
րեւ կարեւոր միջոցներ են. բայց ընդ
նմին և սարղ միջոցներ : Այսպէս խօ-
սելով ես տակաւին այնչափ հեռի չեմ
երթար, ինչպէս գնացած է Ս. Գիլբէր-
տսելով. « ՅԱստուծոյ երկիր և զար-
տուիրանս նորա պահեմ, այս է մար-
դն բովանդակ » : Եթէ այս է բովան-
դակ մարդն, հապա ի՞նչ է միւս մնա-
ցեալն. սակայն մենք կը հասկնանք Սու-
ղոմնի միտքն, բովանդակ մարդ ասե-
լով կը յայտնէ նա միանգամայն մարդոյ
փախճանը, նորա գոյութեան պատ-
ճառն ու նպատակն, նորա փառքն ա-
ռաջի Աստուծոյ :

Աստուծոյ միջոցն ՍԵՐՆ Յիսուս Քրի-
ստոս, այն գինն՝ որ հատուց մեր փրկու-
թեան համար, նոյն գնով անշուշտ
պիտի գնէր կամ փրկէր թէ՛ մեր իմա-
ցականութիւնն կամ միտքն և թէ՛ մեր
սիրտն : Բայց ի՞նչ էր մեր Փրկչի բուն
գալստեան նպատակն : Եկա՞ն նա ար-
դեօք քաւել մեր մտաց դատողու-
թեան սխալներն ու մոլութիւններն,
թէ՛ քաւել մեր կամաց զառանցանք-
ներն : Եկա՞ն նա արդեօք ուղիղ խոր-
հիլ ուսուցանել մեզ, թէ՛ ուղիղ գոր-
ծել : Կամեցա՞ն նա արդեօք իմաստուն-
ներ առնել զմեզ, թէ՛ սուրբեր : Սոյն
հարցմանց պատասխանն, լիովին կը
հաստատէ այն ճշմարտութիւնն, զոր
կ'առաջարկեմ ձեզ. եւ ես վստահ
եմ, որ ձեր խիղճն եւս պիտի վկայէ
այս բանին : Մարդոյ փառքն կամաց

աղղութեան եւ բարեւոք դործածու-
թեան մէջ է . իսկ իմացականութեան
փառքն է ծառայել բարոյական օրդ-
բունքի յաղթանակի համար , այսինքն ,
թէ մարդոյ մօրթինն և թէ միտքն միակ
նպատակ պիտի ունենան բարոյակա-
նութեան սկզբունքն թագաւորեցը-
նել :

Արդ՝ հարկ չէ ամենեւին հաստա-
տել այսօր երկար փաստերով թէ ի-
մացականութիւնն ՚ի վեր է քան զին-
թըն , թէ եւ նիւթն յաղթող կը հան-
դիսանայ շատ սրտերու մէջ և նաեւ
շատ տեսնիտն պրուածոց մէջ . բայց
աւելի հարկ է գիտութեան և մտաց
հարստութեան կամ իմացականու-
թեան բուռն եւ անդն բանձել : Պէտք
է ասել ինչպէս նիւթապաշտներուն ,
որ իրենց նիւթապաշտութիւնն ապա-
կանութիւն է , նոյնպէս պէտք է ասել
եւ իմացականութեան սիրահարնե-
րուն , որ իմացականութիւնն ՚ի վեր
դասել քան զբարոյականութիւն՝ ա-
պականութիւն է : Պէտք է ասել որ
ամենէն մտաւոր մարդն , եթէ առանց
բարոյականութեան է , ոչ սղ ինչ է ,
եթէ ոչ իմացական կենդանի : Պէտք
է ասել , որ անբարոյական իմացա-
կանութեան յաղթանակներն ամենե-
ւին տարբերութիւն չունին՝ անաս-
նական ուժոյ եւ մարմնաւոր զօրու-
թեան յաղթանակներէն : Պէտք է ա-
սել , որ մտայ և հանձարոյ վերայ չա-
փաղանց զարմանայն , նոյն սկզբունքն
կը բղնի , ինչ որ է շանկո-նի-նն աւայ ,
զոր Առաքեալն կը դատապարտէ ընդ-
շանկութեան մարմնայ և ընդ ամբար-
տաւանութեան աստի կենայ :

Յաւօր սրտի պիտի ասեմ , որ մի-
քանի երկիրներու մէջ միտքն և հան-
ձարն մեծ առաւելութիւն ստացած
են , եւ վարուց ապականութիւններն
ընդ քողով ծածկուած : իմացականու-

թեամբ կամ մտքով չը զարգացած
մարդն թշուառ եւ ողորմելի կը հա-
մարուի ընկերութեան մէջ , իսկ մտա-
ցին և հանձարեցն թշուառ չեն , եւ
ամեն տեղ կ'որոնուին : Սակայն ուրիշ
աչքով կը նային այն մարդոյ վերայ ,
որ վատ վարք չունի , և ամենեւին վատ
օրինակ չը տար այլոց : Մինչեւ անգամ
կը համարձակին ասել որ կանոնաւոր
բարոյականն անհաշտելի է հանձարոյ
հետ և թէ շատ հանձար և շատ ա-
ռաքինութիւն ունենալու համար շատ
բան պէտք է անել :

Ներկայ ժամանակի մտաւորական
յաղթանակներու արբեցութիւնն այն-
չափ սարսափ կ'աղդէ ինձ , որչափ ընդ-
հանրապէս սարսափ կ'աղդէ նիւթա-
կան վայելութեանց անձնատուք լի-
նելու միտումներն : Այս պատճառաւ
ահա կը փախաքիմ ձեր հայեցումքն
դէպ ՚ի այն կողմն դարձնել , ուր կա-
մեցաւ դարձնել մեր առողւածային
Վարդապետն իւր տշակերտայ նոյ-
ուածքն : Ո՛վ աղքատ սցրի Աւետա-
րանի , ո՛վ խոնարհ կին , զոր Փրկիչն
աշխարհի մի խօսքով յաւիտեան հըռ-
չակեց աշխարհի վերայ , ո՛վ երջանիկ
կին , ձգէ դարձեալ քու լուսոյն , ձգէ ,
թափէ արտասուացդ հետ խառնուած
քրտինքդ մարգասիրութեան գանձա-
նակին մէջ : Աստ մեզ , եթէ համեա-
տութիւնդ կը ներէ քեզ , առա՛ մեզ ,
ի՛նչ հոգեկան շարժում էր այն շոր-
ժումն , որ սիրադ յուզեց և աղքատ
ձեռքդ շարժեց , ինչ որ ունէիր , ու-
րիշ աղքատներու նուիրելու : Մի լոկ
լուսոյ չէր այն , այլ քո բոլոր կեանքդ
էր : Մեր աչքերն կշապցած են երե-
ւելի տաճարի շքեղութենէն և մե-
ծութենէն , բայց մեզ քո հոգւոյդ
սրբավայրն , քո հոգւոյդ տաճարն , ո՛վ
կին , և ցոյց մեզ ուրիշ շքեղութիւն-
ներ : Յոյց մեզ քո վշտերդ , որոնք ու-

դարմաճութեան փոխառած են . ցոյց
մեզ քո թշուառութիւնդ , որ աչք
կը տայ քեզ այլոց թշուառութիւնն
տեսնելու : Այնպէս արա՛ , որ կար-
գանք քո սիրտդ , որ մարդասիրու-
թեան պատուէրն իրեն կը վերագրէ ,
մինչդեռ այն աւելի հարուստներուն
կը վերաբերի քան թէ աղքատներուն :
Ասա՛ մեզ , ինչ քաղցր երախտագի-
տութիւն կը զգաս առ Աստուած , որ
քեզ մի լումայ տուած է : Յայտնէ՛ մեզ
աշխատանացդ այն դաղտնիքն , որով
ստացած ես այն լումայն , այն աղօթքն ,
որով ձեռք բերած ես զայն . այն երջա-
նիկ և վշտոյի կեանքն , այն յօգնու-
թիւններն , այն անձնամոռ ժուժկալու-
թիւնն , որով պահպանած ես զայն
լումայն : Մասն և բաժին հանիր մեզ
այն փառաւոր հաղորդակցութենէն ,
որով ճաշտիած ես Աստուծոյ միսթա-
րութիւնն քո չքաւորութեան մէջ :
Այն , կը փափաքիմ ես , կարօտ եմ ես ,
աչքերս հանգստայնել աշխարհիս ան-
ցաւոր շքեղութեանց նայելէն և ա-
կանջներս անգորրայնել աշխարհիս
աղաղակներն ու բոմբիւններն լսելէն :
Իշխանութեան փառաւորութիւնն ,
մտոց փառամոլութիւնն և այլ ամ-
բարօտաւան ու բարբարոս փառաւո-
րութիւններ ընդարմացուցած են զիս և
թալկացուցած : Սիրոս ծարաւի է ի-
րական և ճշմարիտ հիւծոյ . եւ այս
ճշմարիտ հիւծին ու իրականութիւնն
քո սրտիդ մէջ կը տեսնեմ , ո՛վ աղ-
քատ կին . քանզի կը տեսնեմ , որ մար-
դիկ ձգած են , բայց Աստուած այցե-
լութիւն եկած է քեզ : Բայց աւելի
քո մօտ կը տեսնեմ իմ պապակս զը-
վայնոջ ջուրն յաւիտենական , ո՛վ
Փրկիչդ իմ Յիսուս . քո մօտ , որոյ տե-
սիլն անարգ է և նուազեալ քան զա-
մենայն որդւոց մարդկան , և որ ինք-
նին ասացեր . « Որքն եմ ես և ոչ մարդ » ,

և սակայն դու ինքն ես Տէր 'ի փառս
Աստուծոյ Հօր :

Այո՛ , այո՛ , միայն Յիսուսի Քրիստոս
սի մէջ է , որ մարմինն ունայեացած է
և հոգին անբաժնետա՛ծ . ամենայն մե-
ծութիւն բացակայ է և միայն կ'երե-
ւի ճշմարիտ մեծութիւնն , հոգւոյ մե-
ծութիւնն : Արտաքուստ բան մի չը
կայ նորա վերայ , որ փափաքիմք տես-
նել . չը կայ գեղեցկութիւն , և տեսիլ
նորա անարգ է քան զամենայն որդւոց
մարդկան , չը կայ շքեղութիւն , չը կայ
փառաւորութիւն . բայց կայ մեծու-
թիւն , կայ գեղեցկութիւն , զոր փո-
խանակ փեսիւն ալ տք է զգալ : Փակե-
ցէք ձեր մարմնոյ աչքերն , բայցէք հոգ-
ւոյ աչքերն և ասացէք Պառստիւն հետ .
« Ո՛հ , ինչքան փառաւոր ես Յիսուս ,
ինչքան շքեղ և սքանչելի է քո գա-
լուսագ սրտի աչքերու համար , որք
կը տեսնեն զիմաստութիւն » : Ահա՛
սիրտն է ճշմարիտ տաճար ճշմարտին
Աստուծոյ : Մարմարանայ տաճարն ,
ոսկեղոծ և փողփողիւն տաճարն , ձեր
աչքերն կը գրաւեն եւ կը հեռայնեն
կենդանի տաճարէն , ուր կը բնակի
լուսն Աստուածութեան : Կարո՞ղ էք
դուք ուրիշ բանի նայիլ , քանի որ
Մարդասիրութիւնն սրտի տաճարի մէ-
ջն է : Մարդասիրութիւնն է փառք
հոգւոյն , փառք մտոց , նա է միան-
գամայն փառք Աստուծոյ . և այն մար-
դը , որոյ մէջ կը բնակի գերագոյն
մարդասիրութիւնն , այն մարդն կը
ներկայայնէ նաեւ գերագոյն մեծու-
թիւնն ու գեղեցկութիւնն : Ահա՛ այս
մեծութեանն պէտք է նայիլ , ահա՛ այս
գեղեցկութեան պէտք է նայիլ յաւի-
տեան :

Արդ՝ կը հաւատամ ես , որ լաւ
համոզուեցաք թէ այն մարդիկն , ո-
րոնք Յիսուսի Քրիստոսի աչքով նայած
են կենդանի և մարմնացեալ մարդա-

սիրութեան վերայ, նոքա բնաւ երբեք կամեցած չեն ուրիշ բանի նայիլ: Գուր եւս կը վիրայէր, որ զՅիսուս Քրիստոս տեսնողներն և ճաշակողներն միշտ ցաւակցութեամբ նայած են այն մարդոց վերայ, որոնք չեն նայիր Յիսուս Քրիստոսին, այլ կրնային նիւթոյ, կրնային սրտաքին շքեղութեան և խորասուգուած են մտաց ամբարտաւանութեան մէջ: Յաւիտենականութեան նկատմամբ դաշտի ծաղիկն տեւողութեամբ եւ մեծութեամբ հաւատար է ամեն բարձրաշէն և հոյակապ յիշատակաբաններուն, իմացականութեան ամեն վեհմ խորհուրդներուն և ծնունդներուն: Վասն զի տիեզերական ալեկոծութեան մէջ ամենայն ինչ պիտի կորնչի, ինչ որ միացած չէ Աստուծոյ հետ, և Աստուած միայն է ի վերջան զամենայն ալեկոծութիւն: Ամեն բան պիտի կորնչի, և նոյն իսկ ձեր մտածութիւններն ու խորհուրդներն անգամ, եթէ միացած չեն Աստուծոյ հետ:

Ո՛վ Բուրդեր, կամ մտաց դրութիւններ և սխառմաներ, ո՛վ ալեւոր լեռներ, ո՛վ քան զամենայն լերինս բարձրագոյն երազներ եւ ցնորքներ, դուք պիտի կորնչիք համանդամայն: Վասն զի Աստուած միայն է անմահ և իւր անմահութիւնն նոցա միայն կը հաղորդէ, որոնք համանման են իրեն, որոնք միացած են իրեն հետ: Հնազանդութիւն խոնարհութեամբ ձնազանդութիւն՝ սիրով, ահա՛ այս է, որ չը կորնչիր յաւիտեան: Բնութիւնն իւր տուած պարգեւներն յետ կ'առնու, միայն շնորհաց պարգեւներն են, որ անմահ են եւ յաւիտենական: Ամեն արտաքին գեղեցկութիւն կը լուծուի, կ'անհետի, սրտի գեղեցկութիւնն է միայն, որ չը թաւաւոր, այլ միշտ կը ծաղկի և կը փթթի:

Այսպէս և այս իմաստով ահա՛ Յիսուս Քրիստոս քարոզեց կեանք և անմահութիւն: այս իմաստով Քրիստոսն էութեան մեծութիւնն տուաւ ամեն բանի իւր ճշմարիտ արժէքն, թէ երեւելեաց և թէ աներեւելոյ: Քրիստոնէութեան սոյն յատկութիւնն այնչափ ակներեւ է և յայտնի, որ անհրնար է ուրիշ կերպիւ հասկնալ և ըմբռնել Քրիստոնէութիւնն, եթէ ոչ իրրեւ թագաւորութիւն հոգւոյ, եւ իրրեւ յաղթութիւն անտեսանելոյն և աներեւելոյն: Բայց գիտենք, որ Քրիստոնէութիւնն ձեւ կամ մարմին առաւ աշխարհիս մէջ, նա տեսանելի եղաւ: Աշխարհներէ անցաւ, դարերէ անցաւ, Գերկիս վերայ զինքն պաշտպանեց և այն բաներու մէջ աեղ գըրաւեց, որոց վերայ աշխարհն կը նայի և կը տեսնէ: Այս տարածութեան և տեւականութեան մեծութիւնն զատ Քրիստոնէութիւնն ունի հոգեւոր եւ իմացական մեծութիւն: Նա մեծ է իւր ծնած եւ ներշնչած գաղափարներով, մեծ է իւր քարոզած իմաստութեամբ, որով և դրաւած է լամեն վեհեմաթուիչ մտածողներու զարմացումն: Այսպէս ուրեմն, Քրիստոնէութիւնն մեծ է նոյն իսկ ըստ եղանակի մտածութեան աշխարհի: Բայց պէտք է զգուշանանք այս եղանակաւ Քրիստոնէութեան վերայ զարմանալու: Պէտք է զգուշանանք, որ Քրիստոնէութեան ճշմարիտ մեծութիւնն մեր տեսութենէն չը խուսափի: Զը թուողնք, որ մեր նայուածքն խոտորի ու մարորի և չը պարտաւորենք զՅիսուս, որ զմեզ յանդիմանէ. «Այդ բանին կը նայիք, այդ է, որ կը զարմացնէ զձեզ»: Ի՞նչբան թշուառ պիտի լինէինք մեր, եթէ այն նպատակաւ միայն մտնէինք աներեւելոյ թագաւորութեան մէջ, որ պէս զի աւելի սերտ և ապահով կապով

կատարելինք տեսանելի աշխարհի հետ,
և նոյն խոյն հոգւոյ թագաւորութեան
մէջ ուրիշ բան չը գտնելինք, այլ միայն
զաշխարհ, իւր ամեն յօժարութեամբ
և յանկուծեամբ: Ի՞նչքան թշուառ
պիտի լինելինք մենք, եթէ Եբրայեցի
Ժողովրդին նման մեր բոլոր յոյսն դը-
նելինք այս ունայն և դատարկ խօսքե-
րուն վերայ. «Տաճար Տեառն, տա-
ճար Տեառն, տաճար Տեառն», Երեմ.
Է. 4. եւ ամենեւին չ'ուզղէինք մեր
ճանապարհն ու գնացքն: Եթէ մի մի-
այն Քրիստոնէութեան նիւթական և
մտաւորական կրկնակի մեծութեանն
նայինք, այս կը նշանակէ խակալէս մեր
աչքերն քարերուն սեւեռել, ինչպէս
սեւեռեցին տաճարի քարերուն վերայ
Յիսուսի աշակերտներն: Ընդարձակ
մտածութիւններն, գարաւոր աւան-
դութիւններն, փառաւոր յիշատակ-
ներն, առանց Քրիստոնէութեան ճրչ-
մարիտ ոգւոյ, անշունչ քարեր են,
ցուրտ նիւթեր, կարծր նիւթեր, ան-
կենդան նիւթեր: Բայց կան ուրիշ քա-
րեր, կան կենդանի քարեր, որք իրա-
րու հետ միանալով կը կաղմեն հոգեւոր
շինուածն և սուրբ քահանայութիւնն.
«Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս չի-
նիք տաճար հոգեւոր՝ յանարատ քա-
հանայութիւն, մատուցանել զհոգե-
ւորն պատարագս՝ հաճոյս Աստուծոյ
ի՛ ձեռն Յիսուսի Քրիստոսի»: Ա. Պէթ.
Բ. 5: Անշուշտ՝ սոյն կենդանի քարե-
րէն էր այն սյրի կինը, որոյ առատա-
ձեռն ողորմութիւնն նշմարեց Յիսուս
Քրիստոս: Սոյն քարերէն են ամեն ան-
կեղծ և խոնարհ հոգիներ, որ ապաշ-
խարութեամբ նոր կեանք ստացած են,
կեանք ծածկեալ ընդ Քրիստոսի յԱս-
տուած: Այս կենդանի քարերէն են
այն հոգիներն, որոնք թերեւս Աստու-
ծոյն տալու համար ուրիշ բան չ'ունե-
նալով իրենց անձն տուած են սիրով

և հաճութեամբ: Ահա այս գեղեցիկ
քարերուն, այս շքեղ մարմարիոննե-
րուն պէտք է որ նայինք: Որոնե՛նք ու-
րեմն սոյն քարերն. որոնե՛նք այս աղմը-
կալից աշխարհի մէջ. որոնե՛նք տա-
տուած պաշտութեան արտաքին փա-
ռաշուք ձեւերու տակ. որոնե՛նք հո-
յակապ տաճարներու մէջ խոնուած
բազմութեան սրտերու մէջ. որոնե՛նք
և գտնենք այս գաղտնի մեծութիւնն,
այս գաղտնի աշխարհն, այս անորեր-
կրեայ բնակարանն, այս խոնարհու-
թեան գեանափորներն, ուր ի լուս-
թեան կը կատարուի հոգեով և ճշմար-
տութեամբ երկրպագութիւնն և ուր
կը փառաւորուի անարատ եւ սուրբ
կրօնն: Այս որոնման մէջ կ'սպասէ
ահա մեզ հոգեւոր տեսարան, որոյ
գեղեցկութիւնն կը յափշտակէ մեր
սիրտն: Խոնարհութիւն, ներողու-
թիւն, ողորմութիւն, ապաշխարու-
թիւն, աղօթք, վստահութիւն առ
Աստուած, քաղց և ծարաւ արդա-
րութեան, նախանձաւորութիւն վանն
աստուածային փառաց, արքա են ա-
հա ճշմարիտ տաճարի, ճշմարիտ սրբ-
բալայրի գեղեցկութիւնն ու շքեղու-
թիւնն: Աւելի կը փայլի և կը շողողայ
սոյն շքեղութիւնն, երբ ներկայացու-
ցին մի աղքատ է, մի գերի, մի տը-
գէտ, մի մանուկ կամ մի չարագործ,
որ զղջալով Աստուծոյ ողորմածութեան
գիրիդ գլխած է: Այն, որչափ հեռի է
տակաւին մեր սրտէն ճշմարիտ մեծու-
թեան սէրն, քանի՛ քանի՛ անգամ աղքա-
տութիւնն, տրտմութիւնն կը ծածկեն
մեր աչքէն սոյն ճշմարիտ գեղեցկու-
թիւնն և կըսարտուցանեն զմեզ: Ի՞նչ
պէս կը յօժարինք մենք մնալ այն տեղ,
ուր է աղաղակ և ամբարտաւանու-
թիւն աշխարհի: Ի՞նչքան մարմնա-
ւոր ենք մենք տակաւին և ի՞նչքան ան-
պատրաստ ենք Աստուծոյ թագաւո-

բութեան համար , որ է թագաւո-
րութիւն հոգեւոր : Դեռ սրչափ փո-
փոխուելու կարօտութիւն * ունինք .
սրչափ մեծնալու եւ նաեւ վերածնե-
լու : Մեր զօրութենէն վեր զօրու-
թիւն , մեր մարդկային կարողութե-
նէն վեր մի կարողութիւն միայն կա-
րող է բարձրացնել զմեզ մինչեւ այն
տեսութեան կէտն , ուստի ամենայն

ինչ իւր զօրութեամբ կ'երեւի , փոք-
րոն՝ փոքր և մեծն՝ մեծ : Խնդրենք
ուրեմն այն վերին Կարողութենէն ,
որ կը անօրինէ ամենայն ինչ , որ կը
անօրինէ ներկայն և ապագայն , որ
Տէրն է յաւիտենահանութեան . իսն-
չրենք որ ինչպէս ուրիշներուն տուած
է , մեզ ևս տայ սրաի աչքեր , որ կա-
րողանանք Իմաստութիւնն աւանդ :

Վ.Ա.ՍՆ ԹԱԼԵՀԻ ԵՒ ՊՌՃԻ

Ի Ֆրի Երգէ :

ՄԱՐԴՈՅՆ որ Թալէհն ու Պուռճն՝ ՚ի Ֆալսթն չէ ըզորդած .
Թէ շատ և քիչ քանայ՝ թէ ըզորդի , նա այլ իսկ է ծրւած .
Բանին ըզորդն ու ծուռն՝ գէշն ու աղէկն , ՚ի Զարին է կապած .
Եւ յօր ծննդեան մարդոյն , ոնց մօրէն է ինք բաժանած .
Զտախաթն՝ երբ կուտայ Աստուած , նա կուգայ ամենն աջողած .
Բայց զայն իմանալ պիտի , թէ Թալէհն յոյր Պուռճ է անկած .
Թէ՞ Պուռճն ու Թալէհն աղէկ , յԱստուծոյ է քեզ հրամայած ,
Զինչ յաշխարհս՝ մարդ որ կայ , ղերթ մշակ առաջդ են կանգնած :

Այն մարդն որ թալէհ չունի , յամենայն տեղիք նա ծեծած .
Զանայ թէ մէկիկ խօսի , քան զոսկուլ աղէկ նա գրած .
Կանչեն թէ քանի՞ ասես , քո ամեն բաներդ է հոտած .
Զօրն դու ՚ի հաջ կենաս , յԱստուծոյ հատած ու անխճած .
Այն մարդն որ Թալէհ ունի , յումեքէ իսկի չէ ծեծած .
Զօրն կայ պարսպ նստած , շատ բարիք ՚ի մօտն է կուտած .
Զինչ որ կու խօսի , աղւոր մարգարտով բաներն է շարած .
Թագաւոր և դատաւորի մօտ և ամենայն տեղիք մեծարած .
Թէ ճարտարութեամբ ուտէր մարդ զհացն զինչ իւր էր հրամայած .
Անգէտն տառապեալն յաշխարհիս վերայ չ'սխալէր մէկիկ ապրած .
Ի սերմանելոյ ժամն կու լինի այս ցեղ հանգիպած .
Մէկըն թագաւոր լինի , մէկըն աղքատ՝ և մէկըն ցաւած ,
Մէկին ծերութիւն հասնի , ու ամեն բաներն յաջողած .
Մէկին գերութիւն հասնի , կամ կտրիճ օրօք նա մեռած .